

ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՎՍԵԲԻՈՍ ԵՄԵՍԱՑՈՒ «ՄԵԿՆՈՒԹԻՒՆՔ»-Ի ԼԵԶՎԱԿԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եվսեբիոս Եմեսացին ծնվել է IV դարի սկզբներին Եդեսիայում, որտեղ մայրական կրթություն ստանալուց հետո մեկնում է Պաղեստին, աշակերտում մեծ համբավ ունեցող Եվսեբիոս Կեսարացուն: 330-ական թվականներին գալիս է Անտիոք՝ կատարելագործելու իր ուսումը: Մահացել է 359 թ.¹ թողնելով գրական հարուստ ժառանգություն, որի մի մասը հայերեն է թարգմանվել V դարում: Երկար ժամանակ մրա շատ գրվածքներ վերագրվել են այլ հեղինակների (Եվսեբիոս Անտիոքացի, Սեբերիանոս Գաբաղացի, Կյուրեղ Աղեքսանդրացի և այլք): Կարծիք է հայտնվել, որ հայերը չէին թարգմանի Եմեսացու գործերը, քանի որ մա արիոսական գործունեություն էր ծավալել. «Եմեսացու գրածներն հայերեն մատենագրության մեջ չենք հանդիպած և չենք կարծեր, որ մեր մայրենիք անոնց թարգմանությամբ զբաղած ըլլան, հակառակորդք իրեն վարդապետական կարծես»²:

Այս տեսակետն առարկելի է: Տակավին 1921 թ. «Հանդես ամսօրեայ»-ում Ն. Ակիմյանը հրատարակեց Եմեսացու ճառերից մեկը, որը ոսկեդարյան թարգմանություն է: Այժմ հրատարակված են հեղինակի երկու ծավալուն գործեր՝ «Ընտեր»-ը և «Մեկնութիւնք»-ը, որոնք քննական մեծարժեք բնագրեր են:

Ամերադառնա՞նք «Մեկնութիւնք»-ի լեզվական յուրահատկություններին²:

Այս գործի հեղինակի հարցում դարձյալ տարակարծություն կա: Ոմանք Կյուրեղ Երուսաղեմցուն էին վերագրում այն, իսկ 1923 թ. «Բազմավեպ»-ում Վահան վ. Հովհաննիսյանը, նկատելով մի շարք ընդհանրություններ Եզնիկի «Եղծ Աղանդոցի» և նշված գործի միջև, ենթադրում է, որ «Արարածոց մեկնությունը» ոչ թե թարգմանություն է, այլ «նույն ինքն Եզնիկի մատներու ծնունդ»: Հետագայում բանասերը փոխում է իր կարծիքը և «Մեկնության» հեղինակ համարում Եվսեբիոս Եմեսացուն («Բազմավեպ», 1924): Սա արդեն ապացուցվում է անհերքելի փաստերով, Եմեսացու և Երուսաղեմացու գործերի տարբեր թարգմանությունների մանրակրկիտ համադրմամբ, բանասիրության ձեռք բերած նվաճումներով:

Այս գործը Աստվածաշնչի լավագույն և իր տեսակի մեջ ուրույն մեկնություն է. ոչ թե ամբողջական, այլ տարբեր հատվածների ընտրովի մեկնություն:

¹ Գ. Զարբաճալեան, Հայկական թարգմանութիւն մայրենաց: Վննետիկ, 1889, 680:

² Եվսեբիոսի Եմեսացու Մեկնութիւնք, ութամասեան գրոց Աստուածաշնչին (աշխատութեամբ Ռ. Վահան Վարդ. ի Յովհաննէսեան): Վննետիկ, 1980:

Գրքում ներառված են «Մեկնություն Արարածոց», «Մեկնություն Ելից», «Մեկնություն Ղևտացոց», «Մեկնություն Թուոց», «Մեկնություն Բ. Օրինաց», «Մեկնություն Յեսուայ որդու Նաեայ», «Մեկնություն Դատաւորաց», «Մեկնություն Թագաւորութեանց» գլուխները:

Հայերեն թարգմանվել է V դարի առաջին կեսին. այսինքն՝ դասական կամ ոսկե-դարյան կոչված գրաբարն է՝ զերծ օտարաբանությունից, կանոնարկված քերականությամբ ու բառապաշարով: «Մեկնությունը»-ի հրատարակության ներածության մեջ նշվում են լեզվական որոշ անկանոնություններ՝ երբեմն փորձելով վեր հանել մեջ նշվում են լեզվական որոշ անկանոնություններ՝ երբեմն փորձելով վեր հանել դրանց պատճառները: Այսպես, գրեալ է կրավորական բայը երբեմն օգտադրանց պատճառները: Բայցակա մոլորվով դրված՝ բառի հետ. «Գրեալ է գալս լելս» (150): «Ձայս, ասէ, գրեալ է ի գրին, զոր գտաւ» (151), նաև՝ 68-69, 110, 152:

Սրա պատճառը, հրատարակչի կարծիքով, «կրնայ բացատրուիլ, եթէ գրեալ է բայը ներգործական մկատենք և անոր՝ տէրը (ենթական) համարուի Հոգին Սուրբ կամ սրբազան հեղինակը, ինչպէս սովոր են ենթադրել Ս. Հայրերը՝ Ս. Գրքի մեկնութեան մէջ (էջ 15): Երբեմն էլ գտանք բայի ներգործական կատարյալի իմաստով կիրառվում է կրավորական ձևը՝ զոր գտաւ: Այս տիպի օրինակները հատուկ են: Համեմայն դեպս, իրավացիորեն հրատարակիչները չեն ուղղել, և մնան կարգի օրինակներ եթէ զոմով են այլ հեղինակների մոտ, ապա անհրաժեշտ կլինի որոշ օրինաչափություններ նկատել:

Ի՞նչ առանձնահատկություններ են ի հայտ գալիս այս երկում.

Ա.) ԲԱՌԱՊԱԾԱՐ

Մեկնությունը թեև բավական ծավալուն է, բայց մոր բառերի քանակով զգալիորեն զիջում է թարգմանական շատ գործերի: Մեր հաշվումներով մոտ երեք տասնյակ բառեր առաջին գրավոր գործածությունը ստացել են այս գործում (ՆՀԲ-ն հղում է Կյուրեղ Ալեքսանդրացուն, քանի որ, ինչպես նշել ենք, Եմեսացու երկերի մի մասը վերագրվում էր Կյուրեղին): Ահա այդ բառերը. Ամբևտ, անազանաւար «ուշ ցանած» (վկայել է նաև Եփրեմ Ասորին), աչագար, բաղանտ «ծեծի գործիք», բեթ, «հեղուկի չափ», բիտ «հավի ոտքի հետևի մասը», դադարիկ, եռակցական, երթնորդություն, թեկուէ, լակեն, լին «աղեղի մաս», կրկնած, հայթայթամտել «հայթայթել», հաշմոտք, ձերբացի, ձուարդ «ձվածեղ», միապտուղ, մոլեգմուցք, մոնչական, չաշմակեն, նետաթափ, մոյնաբանություն, շալակամատ, ոփելեթի «պարսապոր», չգազան, վերագնացք, քերեթին «աղեղնավոր»: Բերենք մի քանի բնագրային օրինակներ. «Հաճար և ցորեան չհարան, քանզի անազանավար էին» (117): Բառի երկրորդ բաղադրիչը՝ վարել, այստեղ նշանակում է «ցանել», որ գրաբարում նվազ հաճախական է, իսկ արդի որոշ բարբառներ այդ իմաստը պահել են: «Կարիճն՝ գործի ինչ տանջանաց է, մուրք և երկայն, իբրեւ զբաղանտն, զոր հայերեն քուքսն ասեն» (209): «Բեթն չափ իմն է մզելու» (209): Վերջին երկու օրինակները ուշագրավ են ոչ միայն ընդգծված բառերի առաջին կիրառությամբ, այլև այդ բառերի բառարանային առաջին բացատրությամբ: Իսկ մնան օրինակներ այս գրքում բազմաթիվ են:

Ներքոհիշյալ բառերը գրաբարի բառարաններում ավանդված չեն:

ԱՆՋՐԵԻԱԿԻՐ - «Այլ մեք զծիածանն գիտեմք, զի յանձրեաց ցածնույ լինի, յոր-
ժամ արեգակն զճառագայթս ընդդէմ անձրեակկիր ամպոցն արկանիցէ» (49): ՆՀԲ-
ն այս օրինակը բերում է անձրեակ բառաձևի տակ (որը դարձյալ միակ
վկայությունն է՝ փակագծում ավելացնելով «եթ չիցէ գրեալ անձրեակկիր»): Մեր
կարծիքով անձրեակկիր-ը իմաստով հարիր է բնագրին, և պետք է գրաբարի բա-
ռարաններում արձանագրել այդ հայական, գեղեցիկ բառը:

ԲԱՂՂԱ - «Ջոր այլուր Գիրք Ջորբայ կոչեն եւ ասորին ծաար եւ երբեմն բա-
աղա, այսինքն է ընկղմիչ» (63): Ընդգծված բառերը նույնպես բառարաններում
վկայված չեն:

ԵՐԳԱԶ - «Բայց երգազն անաթ ինչ է հիսկեմ, որ այնպես կոչէր յայլազգեաց»
(164): Ծանոթագրվում է, որ ՆՀԲ-ն այս բառը չունի, իսկ Եմեսացին կիրառել է
երկու անգամ: Աստվածաշնչում գործածված է երգաբար/արգոր: Եմեսացին Աստվա-
ծաշնչի «եւ Դաւիթ, աւե, յարեաւ յարգորբայն» (Ա. Թագ. Ի 41) մեկնում է այսպես.
«կամ ի թօկոյ ինչ, որոյ անունն այնպես էր եւ ոչ թարգմանեցին, կամ ի դարափորէ,
որ թաքուցեալն էր» (164):

ԷԱՄԻՆ - «Ասորին փոխանակ էամինն ասելոյ՝ ջուր աւե, իսկ յեբրայեցին՝ բնա-
ւին իսկ էամինն ջուր մշամակէ» (85):

ՄԱՂ ՄԱՂ - «Հաց կսկում, որ մկանն կոչի եւ լինէր այսպես. սալ ջեռուցանէին,
յորոյ վերայ զճարպն թացեալ՝ անաստառ անդ դնէին եւ ապա մաղ մաղ ի վերայ
արկանէին» (182): Կարելի է թարգմանել «կամաց-կամաց, դանդաղ»: Բառն այս
իմաստով հանդիպում է Ղարաբաղի բարբառում: Ծագում է թերևս հ. ե. mel -
արմատից, որից՝ մեղմ, մալեմ:

ՍՈՎՐ - «Ցուլ ասիցէ եբրայեցերէն սովր, զոր եւ պարիսպ մարթի իմանալ. զի
սովրն որ է ցուլ եւ սուրճ՝ որ է պարիսպ նովին մշամագրովք գրին» (92):

ՌԱՄԷԲԱՆ - «Բայց եւ ՌԱՄԷԲԱՆ ասի անփուտ փայտ, զոր եբրայեցին ըն-
տիր ասէ եւ ասորին՝ անփուտ» (45):

Այս կարգի բառերը (բացառությամբ անձրեակկիր, մաղ մաղ-ի) օտար բառ-
հասկացություններ են, այդ պատճառով էլ թերևս բառարանները չեն գետնելել (թեև
այս սկզբունքը միշտ չէ, որ բառարանագիրները պահպանում են): Բառածանցման
առանձնահատկություններից կարելի է մշել և ածանցի հաճախականությունը: Այս
կազմությունն ուսումնասիրողներն ավելի բնորոշ են համարում ժողովրդախոսակ-
ցական լեզվին: Առավել հաճախական են բայերի ժխտման դեպքում՝ հատկապես
անցյալ անկատարի ձևերում, թեև մյուս ժամանակաձևերի դեպքում երևույթը նույն-
պես մկատելի է: Ներկա ժամանակ. չերեի (103), չունի (133, 140, 147), չհասանեն
(179), չերկնչիմք (229), չասէ (223), չմտաբերէ (222): Անցյալ անկատար. չգիտէր
(28), չգիտէին (29), չերեւէին (30), չհաւատայր (34), չանիծանէր (40), չմարթէր (213),
չուտէին (45), չէր (79, 173), չելանէր (150), չիշխէր (213): Անցյալ կատարյալ.
չասացաւ (37), չընտրեաց (44), չլուաւ (50), չետ (65, 170), չխնդրեաց (171), չասաց
(173), չգրօսաւ (212), չարոյց (212): Առաջին ապառնի. չուտիցեմք (30), չիցես (103),
չիցէ (171): Դերբայների հետ. չգալոյ (150), չլինելոյ (49), չապաշխարելովն (39): 2
+ գոյական կազմություններից առկա է միայն չգազան բառը. «իսկ գազանք

զազդերաց ոտան պորտին ամփոփեն իբրև չգազանս... եւ արդ զգազանս եւ զչգազանս այսպէս ճանաչեմք» (127): Ժողովրդախոսակցական կնիք ունեն մաս երէն ամանցով կազմությունները, որպէս այս կամ այն լեզվի անվանում. «Հրէերէն միտք են, որպէս ի տաճարին միայն կարծէին» (160): «...Նուրբ եւ երկայն, իբրեւ գրադանուն, զոր հայերէն քուքսն ասեն» (209):

Օտարաբանություններ այս գրքում բավական քիչ են: Որպէս հունարեն ձևեր գործառում են փիլիսոփա, պոետիկոս բառերը, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է հունական իրականությանը. «Եւ արդ եթէ ի յունաց հեթանոս ոք իցէ, որ պոետիկոսացն անասցէ... իսկ եթէ փիլիսոփոս իցէ...» (12): Մի շարք անձնանուններ հարազատ են պահել ասորերեն հնչյունակազմը. «Իսկ թագաւորութեան տաշինն զԾնունելէ և զԳաւուղէ և զԴաւթայ...» (157): «Վայրապար ասեն զի և Յեշուայ, որդոյ Նաւեայ» (100): «Եւ ասէ Եղիշա ցԳեեզի» (212):

բ) ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեկնողական գրականությունն արժևորվում է հիմնականում պատմական, բանասիրական հայեցակետերից: Բայց անժխտելի է մաս այդօրինակ գրականության դերը՝ կապված լեզվական զանազան խնդիրների հետ: Այս առումով քննության առարկա սկզբնաղբյուրը բավական ուշագրավ է: Բազմաթիվ հատվածներում մեկնվում-բացատրվում են եբրայերեն բառեր ու ոճեր՝ փաստորեն կատարելով առաջին բացատրական բառարանի դերը: Համախա Նմեսացին, քննելով Աստվածաշնչի այս կամ այն հատվածը, անհրաժեշտ պարզաբանումներ է կատարում համեմատելով այլ լեզուների հետ: Քանի որ այս կարգի օրինակները որոշ լեզվաբանական արժեք են ներկայացնում, չսահմանափակվենք մեկ-երկու մուշնեքով. Աստվածաշնչի «Ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր» հատվածի քննության մեջ հեղինակը հուշում է, որ «ոչ ի սկզբանէ ասէ եբրայեցին, այլ ի գլխոյ: Կամ՝ «Եւ հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց» (ՄՃճ. Ա. 2) հատվածի վերաբերյալ գրում է. «Ջշրջէրն ոչ ի դէպ հաւաստեալ թարգմանեալ է. զի մի բան է եբրայեցին, եւ միով բանին երկուս երեսս չմարթի թարգմանել յայլ լեզու» (8): Ապա մա մշում է եբրայերենում շրջէր-ի բազմիմաստությունը. «ողորբէր, շարժէր, շրջէր ի վերայ»: «Դիր, ասէ, զձեռն քո ընդ երանաք իմովք» (ՄՃճ. ԻԴ. 2) հատվածի կապակցությամբ Եվսեբիոսը գրում է, որ հունարենում ավելի պարկեշտ թարգմանություն է, որովհետև «եբրայեցին զառնացի անդամոցն իսկ ասաց. անդ հրամայէ դնել զձեռն, զի ի թլպատութիւնն՝ յԱստուծոյ ուխտն երդնուցու» (70): Կան բազմաթիվ օրինակներ, որոնց իմաստային տարտամությունը կամ սխալ ըմբռնումը Նմեսացին բացատրում է եբրայերենի ուղղագրության առանձնահատկություններով, ընդհանրապես մշում Աստվածաշնչի բնագրի լեզվի յուրահատկությունները: Նա նկատում է, որ եբրայերենում անձի մասին խոսելիս օգտագործվում է հոգնակի ձև. «որպէս թէ զանձնէ ոք ասիցէ՝ գրեցաք, փոխանակ ասելոյ թէ գրեցի» (52): Խոսելով եբրայերեն սովոր և սուր բառերի թարգմանության շփոթի մասին՝ Նմեսացին մշում է և դրա պատճառը. «քանզի զուն և զով հեզեմայն ոչ ըմտրէ ի միմեանց» (92): Նա հուշում է, որ մի քանի բառերի շփոթումը հետևանք է մայր լեզվում

ձայնավորների չգրություն: Օրինակ, կր հնչյունախումբը կարող է կարդացվել կեր, կուր, կոր: Բերենք որոշ օրինակներ, որտեղ բառի բացատրություն-մեկնություններ են, այսինքն՝ դրանք բառարանագրային արժեք ունեն: «Մի՛ մնասցե հոգի իմ ի մարդիկդ այդ» (Ծննդ. 2 3): Հեղինակը մկատում է, որ հոգի այստեղ նշանակում է «կյանք» (43): Ի դեպ, այս իմաստը ՆՀԲ-ն հղում է Աստվածաշնչից: «Իսկ հեքրայեցին և ասորին զժամանակն վախճան ասեն կամ կատարած» (44): Այս բացատրությունը վերաբերում է «ժամանակ ամենայն մարդոյ եկեալ հասեալ է առաջի իմ» (Ծննդ. 2 13) հատվածին: Ծուռ բառի «կյանք» իմաստը բառարաններում հստակ չէ: Հիմք ընդունելով Ծննդոց գրքի «բայց զմիս արեամբ շնչոյ մի՛ ուտիցէք, քանզի եւ զձեր արիւն շնչոյ խնդրեցից. ի ձեռաց ամենայն զազաւնաց խնդրեցից...» (Թ. 4) հատվածը՝ հեղինակը պարզաբանում է. «Ծուռ աստ զկեանս նշանակէ զմարդոյ և ամասնոյ» (448): «Եւ ի վերայ Եդովմայ թաթափեցից զկաշիկս իմ» (Սաղմ. ԺԷ): Եմեսացին մկատում է, որ կոշիկ այս համատեքստում նշանակում է «ոտք» (101): Ի դեպ, այս իմաստը բառարաններում արձանագրված չէ: Նշենք նաև, որ Սաղմոսներից բերված վերոհիշյալ հատվածը հայերեն Աստվածաշնչում մի քիչ այլ է. «Յեդովմէ ուղղեցից զգնացս իմ...» (Սաղմ. ԺԷ 10):

«Եւ ի վերայ մեռելոց մի՛ կործինցիք և գիր կտեալ յանդամս ձեր մի առնիցէք» (Ղեւո. ԻԱ 5): Գիր կտեմ կապակցությունը որպես գլխաբառ (բառահոդված) ՆՀԲ-ն չունի: Արմատական բառարանում կուտ «պի» բառի տակ նշվում է գիր կտեալ կապակցությունը՝ «մահուեսիների ձեռքի վրա բանված պատկեր, հաջի արած» բացատրությամբ: Եմեսացու՝ ներքոհիշյալ բացատրությունն ավելի պարզ է ու համապատասխան վկայության հետ աղերսվող. «Գիր կտեալ՝ գտեղն... եւ կամ թէ զեգիպտացոց սովորութիւնն՝ որ զբազուկսն հերձատեն դանակաւք» (132): Հերձակ բառի առաջին վկայությունը, գուցե և միակ, գտնում ենք այս գրքում. «Հերձակ կամ զնետն կոչէ կամ՝ զնպատակն յոր ձգէր» (171): Աստվածաշնչում (Սաղմ Ի 20) բառին համանիշ է փքինը: Հետևյալ ընդգծված բառերի բացատրությունն էլ թերևս առաջինը տալիս է այս գիրքը. «Բերեթին աղեղնատրք են, եւ ոփելեթին՝ պարսատրք» (187): ՆՀԲ-ն էլ վկայում է այս եզակի օրինակը: Մեկնվում են նաև բաղանտ բեր և բազմաթիվ այլ բառեր: Եմեսացին տալիս է նաև եբրայերեն բառերի համանշտության ցանկ. այսպես. «Քանզի եբրայեցին այլ եւ այլ անուամբք կոչէ Ջաստուած, մերթ էլ, մերթ Յաֆ, եւ մերթ Ադոնայի եւ մերթ Եդուիմ» (45):

Ինչպես տեսանք, Եմեսացին բազմաթիվ տեղեկություններ է հաղորդում այլ լեզուների վերաբերյալ: Այս առումով գնահատելի է երկի ճանաչողական արժեքը: Հետաքրքրական են նաև լեզվաբանական որոշ տեքստներ ու հասկացություններ, որոնք փաստորեն գիտության այս բնագավառին վերաբերող առաջին տեղեկություններն են: Բերենք մեր մկատած օրինակները:

Բազմաբար, միաբար. «հոգնակի և եզակի»: Եթե առաջինի՝ որպես լեզվաբանական տեքստի վկայություն կա ՆՀԲ-ում՝ Եզնիկից, ապա միաբար-ով բառարանը վկայություն չի նշում: Եմեսացու թարգմանիչը այս բառերն օգտագործում է «Աստուած» բառի մասին խոսելիս, որոնք մայր լեզվում նույն ձևով են գրվում: «Իսկ Աստուածսն ասել կամ Աստուած իսկ՝ նովին նշագրովք գրի եւ զնոյն առանձին գրեալ չէ մարթ իմանալ թէ միաբար իցէ եւ կամ թէ բազմաբար» (32):

Ձայնատուր «ձայնավոր», անձայն «քաղաձայն», նշանագիր տառ, հնչյուն» տեր-միներին նույնպես հանդիպում ենք այս գրքում:


«Զի գձայնատուր նշանագիրսն որ ընդ անձայնս խառնին՝ ոչ գրիցեն, այլ միայն գանձայնս» (217): Խոսքը երրայեքենի գրության մասին է: Բարբառ «լեզու» - «Եւ այսպէս իբրեւ փոխիցէ գձայնատուրսն այլ եւ այլ բարբառս ցուցանեն» (217):

Վերը նշել ենք միաբար «եզակի» վկայությունը. այդ իմաստով է կիրառվում և միատուրը. «...փոխանակ միատուրի՞ն՝ գրագմարարն դնէ, որպէս յորժամ ասիցէ երկինք, փոխանակ ասելոյ թէ երկին» (218): Եմեսացին նշում է տարբեր լեզուներում կան, փոխանակ սեռերի առկայությունը և թարգմանության ժամանակ դրանց արական և իգական սեռերի առկայությունը և թարգմանության ժամանակ դրանց ստեղծած դժվարությունները: Եմեսացու հայ թարգմանիչը համապատասխանաբար օգտագործում է արուարար և իգարար տերմինները. «Եւ բազում ինչ է, որ յերրայեցին արուարար ասի եւ ի յոյնն՝ իգարար. լուսինն եւ ծով անդ արուարար ասին եւ ի յոյնն՝ իգարար» (218): «Եւ գմեսն գոր ասէ Եսայի թէ զի և ի քեզ Աստուած է, եւ մեր ոչ գիտէք, իգարար ասի. եւ ի քեզն միայն ասելով յայտ է, եթէ իգարար է: Եւ քանզի ի մեր լեզուս չիք այնպիսի բան՝ որ զայն նշանակիցէ, չկարաց յայտ առնել ի քեզն արուարար՝ իցէ, եթէ իգարար» (ն. տ.):

Հեզենայ «վանկ» - «Քանզի գուն և գուլ երրայեցի հեզենայն ոչ ընտրէ ի միմեանց» (92)3:

Եմեսացին զգուշացնում է բառացի թարգմանության վտանգից՝ բերելով օրինակներ. «Ամենայն լեզու, որ նույնաբանութեամբ յալլ լեզու թարգմանիցի, մթին առնի, զի որ առ մեզ երկին՝ ասի, երրայեցերէն բազմաբար ասի թէ երկինք... սոյնպէս յամենայն լեզուս իւրաքանչիւր ուրուք առանձինն բազում ինչ կայ եւ յալլ լեզուացն ոչ գտանի. որպէս յորժամ ասիցէ եթէ «Որդի հարիւր եւ տասն ամաց էր Յեսու որդի Նաեայ» փոխանակ ասելոյ՝ եթէ էր ամաց հարիւր եւ տասանց» (219): Նա զգուշացնում է նաև ընդ մախդրի անպատեհ կիրառությունից. «քանզի երրայեցին զընդն յաճախ վարէ» (92)3:

Եմեսացու՝ լեզվաբանական որոշ հարցերի, թարգմանության խնդիրների ու դժվարությունների հետ կապված նկատառումները, որոնք հայերին ծանոթ են եղել մեր թարգմանական գրականության կազմավորման ակունքներից, անշուշտ նպաստել են հայ թարգմանական արվեստի այն որակի ստեղծմանը, որն առկայանում է V դարում: Եմեսացու գործերի հիմնգերոդդարյան թարգմանությունները դասական գրաբարի լավագույն նմուշներ են, որոնց լեզվական բծախնդիր քննությունն անշուշտ կնպաստի V դարի գրաբարի մի շարք իրողությունների ու օրինաչափությունների լուսաբանմանը:



³ Ընդ մախդրի օրինակը, անշուշտ, հայ թարգմանիչն է: